ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԿՈՒ-2
Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան «10» «փետրվար» 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային N 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն Ն. Հովհաննիսյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրի առարկա է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «1045. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր» ծրագրի «12003. Արհեստագործական հիմնական կրթական ծրագրով ուսանողական նպաստների տրամադրում» և «12004. Միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրով ուսանողական նպաստների տրամադրում» միջոցառումների շրջանակներում «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային N 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 290.0 ուսանողների (առանց ընդունելության) ուսուցումը, ընդ որում՝

1. Արհեստագործական հիմնական կրթության գծով 59 ուսանող, որից՝

ՀՀ կառավարության հաստատած անվճար ուսուցման տեղերի քանակին համապատասխան ուսանողական նպաստ.

1) մրցույթի արդյունքներով ուսումնական հաստատություն ընդունելության կարգով անվճար ուսուցման տեղեր ընդունված, ինչպես նաև նախորդ ուսումնական տարվա առավել բարձր առաջադիմություն ունեցող 58 ուսանող,

Ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)՝ ըստ առաջադիմության, առկա ուսուցմամբ ուսումնառող՝

1) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 1 ուսանող:

2. Միջին մասնագիտական հիմնական կրթության գծով 231.0 ուսանող, որից՝

ՀՀ կառավարության հաստատած անվճար ուսուցման տեղերի քանակին համապատասխան ուսանողական նպաստ.

1) մրցույթի արդյունքներով ուսումնական հաստատություն ընդունելության կարգով անվճար ուսուցման տեղեր ընդունված, ինչպես նաև նախորդ ուսումնական տարվա առավել բարձր առաջադիմություն ունեցող 226 ուսանող,

Ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)՝ ըստ առաջադիմության, առկա ուսուցմամբ ուսումնառող՝

1) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 3 ուսանող,
2) սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների 1 ուսանող,
3) մարտական գործողություններին մասնակցած 1 ուսանող:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում,

2.1.3. ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու մատուցվող ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4. կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.1.5. առանց մատուցված ծառայությունների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կատարողը ժամանակին չի սկսում ծառայությունների մատուցումը, կամ ծառայության մատուցման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծառայությունների մատուցման ժամկետները,

գ. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

2.1.6. կատարողի կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.7. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.2.Կատարողն իրավունք ունի.

2.2.1. պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով մատուցված ծառայությունները,

2.2.2. մատուցված ծառայության արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը՝ սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:

2.2.3. պատվիրատուից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.5. իրականացված միջոցառման արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելու և պատվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.6. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3.Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) սույն պայմանագրով նախատեսված դեպքերում իր և կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կատարողին, այդ թվում՝ կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով մատուցված ծառայությունները և կազմված ու ներկայացված հաշվետվությունները,

2.3.3. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. սովորողների ուսուցումն իրականացնել հանրակրթության պետական չափորոշչին և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով,

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով,

2.4.3. կատարել պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության մատուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պատվիրատուի հնարավորությունը,

2.4.6. իրականացնել սույն պայմանագրի շրջանակներում պատվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.7. պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն ծառայությունների մատուցման ընթացքի մասին: Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար:

2.4.8. պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.9. ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին տրամադրել ուսանողական նպաստ, որը կազմում է 91360800 (Իննսունմեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

1. Արհեստագործական հիմնական կրթական ծրագրի գծով 12087600 ՀՀ դրամ, որից՝

1) մրցույթի արդյունքներով ուսումնական հաստատություն ընդունելության կարգով անվճար ուսուցման տեղեր ընդունված, ինչպես նաև նախորդ ուսումնական տարվա առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը 12087600 ՀՀ դրամ:

2. Միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի գծով 79273200 ՀՀ դրամ՝ որից՝

1) մրցույթի արդյունքներով ուսումնական հաստատություն ընդունելության կարգով անվճար ուսուցման տեղեր ընդունված, ինչպես նաև նախորդ ուսումնական տարվա առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը 78980200 ՀՀ դրամ,

2) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը 197500 ՀՀ դրամ,

3) սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը 62500 ՀՀ դրամ,

4) մարտական գործողություններին մասնակցած ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը 33000 ՀՀ դրամ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄԸ

5.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1910-Ն որոշման 1-ին կետի 31-րդ ենթակետը՝ պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև հաջորդող տարվա հունվարի 20-ը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր (համաձայնագրեր) ձևակերպելու միջոցով, որը պայմանավորված է 2026-2027թթ ուսումնական տարվա ընդունելությամբ:

7.3. Սույն պայմանագիրը կազմված 4 էջից հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.4. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև դեկտեմբերի 31-ը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005460
Հ/Հ 900011005452
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

_____ Հ. Հակոբյան

Կ.Տ /ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային N 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցե՝ Ք.Երևան, Մոլդովական 37Ա
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005356
ՀՎՀՀ 00854028

Տնօրեն

_____ Ե. Հովհաննիսյան

Կ.Տ /ստորագրություն/